ՀԱՆՐԱԳԻՐ 16/22

Ներկայացվող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը՝

Արտակարգ իրավիճակների նախարարություն

Պաշտոնատար անձի անունը և ազգանունը՝

Արմեն Փամբուխչյան

Ոլորտ՝

Անվտանգություն

Հանրագրի վերնագիրը՝

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկը՝

Արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական կայքի անվտանգության մակարդակը բարձրացնելու նպատակով ապահովել «SSL» սերտիֆիկատի ձեռքբերումը։

Հիմնավորումը՝

Արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական http://mes.am/hy/ կայքի «url»-ից ակնհայտ է, որ համապատասխան «SSL» հավաստագիրը առկա չէ, որ թույլ կտար բարձրացնել համակարգի անվտանգության մակարդակը՝ ապահովելով առավել լավ պաշտպանություն հակերային հարձակումներից և պահվող տեղեկատվության արտահոսքից։ Այս առումով, անհրաժեշտ է ապահովել անվտանգության այն նվազագույն պայմանները, որոնք կարող են բերել անձնական տվյալների արտահոսքի կամ պաշտոնական կայքի խափանման։ Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ապահովել նախարարության պաշտոնական կայքի անվտանգությունը, ձեռք բերել անհրաժեշտ սերտիֆիկատները, ինչպես նաև կիրառել անհրաժեշտ այլ միջոցներ հակերային հարձակումներից վեբ ռեսուրսները պաշտպանելու նպատակով։

Կից նյութեր՝

Առկա է 1 կից նյութ

Հանրագրի գլխավոր նախաձեռնող՝

<<Թվային Հայաստան>> ՀԿ

Էլ փոստ՝ info@digital-armenia.am

Հեռախոսահամար՝ +37415333444

Digitally signed by
SHEROYAN MERI